



**Գյումրու բնապահպանական տեղեկատվության  
հասարակական (Օրհուս) կենտրոն**

**№ Ե - 003/14**

**11-ր հունիսի 2014թ.**

**«Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի  
տնօրեն Վարդան Սահակյանին  
Գյումրու Օրհուս կենտրոնի համակարգող  
Վերգ Պետրոսյանից**

**Տեղեկատվություն ստանալու հարցում - 2**

Հարգելի պարոն Սահակյան,

շնորհակալություն 2013-14թթ. ՀՀ Շիրակի մարզի տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունը պատշաճ ժամկետներում տրամադրելու համար, բայց Ձեր պատասխանում մեր հարցման երկրորդ հատվածի վերաբերյալ նշում եք, որ կարելի է փորձաքննական եզրակացություններին ծանոթանալ «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ում:

Իհարկե կարելի է, բայց այս հարցը հստակ կարգավորված է ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթներով, ըստ որի՝ գրավոր հարցման պատասխանը տրվում է այդ հարցման մեջ նշված կյուրական կրիչով, իսկ մեր 05.06.2014թ. № Ե - 002/14 գրությունում մենք հստակ նշել ենք, որ խնդրում ենք տեղեկատվությունը տրամադրել էլեկտրոնային կամ տպագիր տարբերակով:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն հարցմամբ դիմողն իր ցանկությամբ կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով տեղում ծանոթանալ տեղեկությանը՝ հետ վերցնելով իր գրավոր հարցումը, բայց ես նման ցանկություն չեմ հայտնել:

Հարգելի պարոն Սահակյան,

ևս մեկ անգամ դիմում եմ Ձեզ, խնդրելով էլեկտրոնային տարբերակով տրամադրել մեր հարցման մեջ նշված տեղեկատվությունը, այն է 2013-2014թթ. ՀՀ բնապահպանության նախարարությանը դիմած Շիրակի մարզի տնտեսվարող սուբյեկտներին տրամադրված փորձաքննական եզրակացությունների լուսապատճենները:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով,

Գյումրու Օրհուս կենտրոնի համակարգող

Վ.Պետրոսյան